«Այսինչը փնտռում է իր մօրը, հօրը, քրոջը, հօրեղբօրը … վերջին անգամ տեսնուած Սիրիայի անապատներում … աքսորի ճամբին …»:

Նման ծանուցումներ որքա՜ն յաճախակի էին անցեալ դարի 20-ական եւ 30-ական թուականների հայ մամուլում: Քանի՞սը յաջողեցին գտնել իրենց հարազատներին: Քանի՞սը ապրեցին ցաւը՝ անդարձ կորստի, երբեք չիմացան, թէ գուցէ իրենց փնտռածը թուրքի տան մէջ իր գոյութիւնը քարշ տուող մի որբ է կամ հարս է նրա հարեմում ու նրանից սերած երեխան է մեծացնում, կամ գուցէ կրօնափոխ եղած, մի տեղ պահուըտած ապրում է իր նմանների հետ: Վահրամ Գարաբենթը Եալչընին պատմում է, թէ ինչպէս որբ մնացած իր զարմիկին փրկել էին ամերիկացի աւետարանիչները ու Ամերիկա տարել: Տարիներ յետոյ, այդ զարմիկը փնտռել ու գտել էր Վահրամին ու նրանք հանդիպել էին Ամերիկայում:

Հայ որբերի փրկագործումը համատարած երեւոյթ չէր, միայն մի բուռ՝ համեմատութեամբ այն բոլորին, որ կորան, իսլամ տներում առնուեցին, բռնի կրօնափոխ եղան, կամ այնքան փոքրիկ էին, որ չյիշեցին իրենց հայ լինելը: Թուրք իշխանութիւնը նպատակադրուած իր ծրագրով հսկողութեան տակ առաւ հայ որբերի եւ երիտասարդ կանանց թրքացումը: Օսման Քօքերի մէկ յօդուածը «Հայ կանանց եւ երեխաներին մուսուլմաններին յանձնելը բացառութիւն չի, դա կառավարութեան քաղաքականութիւնն է» (“Ermeni Kadın ve Çocuklarının Müsülmanlara Verilmesi Bir Istisna Değil, Devlet Politikasiyedi”), որին կցուած է նաեւ համապատասխան փաստաթղթեր եւ կենտրոնից յղուած հեռագրեր, խօսում է այդ իրողութեան մասին: Ի հարկէ,